

Èè àôÃ °² Û ä º î Æ ä ÆÎ Æ ø² Û, àôÆ

Այսօր հայ ժողովուրդը կ'ոգեկոչէ պատմութեան ամենախոյար մէկ իրադարձութեան 93-ամեակը: Հայոց Յեղասպանութեան 93-ամեակի ոգեկոչումները առիթներ են յատաչաղէմ մարդկութեան յիշեցնելու, թէ հակառակ բազմապիսի ճնշումներու հայ ժողովուրդը պիտի շարունակէ արդարութեան վերականգնման ու պատմական ճշմարտութեան բացայայտման իր պայքարը: Ո՛չ արհեստագիտական նորարարութիւնները, ոչ ալ ժամանակի հետադարձութիւնը կրնան մոռացութեան մատնել պատմական այն յիշողութիւնը, զոր կ'ապրինք ազգովին: Ընդհակառակը, Մեծ Եղեռնի 93-ամեակը խորհրդորհի այն պահն է, որ հայ քաղաքական հոսանքները՝ պետականութիւնը պիտի միառթէ, նախ՝ հանրագումարի բերելու ցարդ կատարուած աշխատանքները, ապա՝ հունարեւելու պահանջատիրութեան ուխտը, մինչեւ ճանաչումը մարդկութեան ճակատին խարանձուած Հայկական Յեղասպանութեան: Գիտենք, որ Յեղասպանութեան իրողութիւնը միջ-պետական փոխ- յարաբերութիւններու մէջ կ'օգտագործուի իբրեւ ճնշումի խաղաքարտ: Գիտենք, որ սփիւռքահայ աօրեային մէջ ծլած վերքը մեզ կը դնեն լուրջ փորձաքննարկներու առջեւ: Գիտենք, որ Հայոց Յեղասպանութեան մէջ գաղտնի մասնակցութիւն ունեցած մութ ուժեր նոյնիսկ ներհայկական բեմի վրայ կը փորձեն ջլատել մեզ, սակայն գիտենք նաեւ, որ պատմական ճշմարտութիւնը դուրս եկած է պատմաբաններու դաշտէն, հասած է քաղաքական ու դիւանագիտական դաշտ: Աւելի քան 16 պետութիւններ ճանչցած են Յեղասպանութիւնը: Այս բոլոր մարտահրաւերներուն դէմ հայ ժողովուրդը իր պահանջատիրական ուղին պիտի շարունակէ տակաւ համակարգուած, աւելի վճռական, բայց սնանաճո՛ր շրջահայեաց ու հետեւողական կերպով:

Թուրքիոյ քաղաքական շրջանակները գիտակցելով մեղակցութեան իրենց բաժնին, կը զգան թէ 1915-ի եղեռնագործութիւնը քոլորակելու իրենց երկարամտ ճիգերը ի վերջոյ պիտի բախին ձախողութեան, որովհետեւ անխուսափելի փաստերու առկայութեան ժխտումի անոնց դիրքերը օրէ օր սկսած են սպառի: Թուրքիա կ'անգիտանայ, որ հայ ժողովուրդին անյարիք են պարտադրականութիւնն ու ճանաչումը: Թուրքիա կ'անգիտանայ, որ անպատկերութեամբ մինչև տակէն փինկիկացած, վերապրող հալը մնաց յանձնառու իր անհատակներուն պատգամին, մնաց հասարակի մը իր սուրբ առաքելութեան, հասնելու հոն՝ ուր նոյնիսկ թրքական իշխանութիւններու մարտավարական խուսանաւումները անգոր պիտի դառնան ծածկելու պատմական ճշմարտութիւնը: Հայոց Յեղասպանութեան ճանաչումը դուրս եկած է լոգումներու եւ յիշատակներու միջև: Թուրքիան դէմ յանդիման դնելով պատմութիւնը վերագնահատելու եւ պատմական իրողութիւնները ընդունելու ստիպողութեան տակ: Դէպի մարդկային ընկերութիւն մերուելու եւ հայ-թրքական փոխ- յարաբերութիւններու մեկնակէտ պիտի դառնայ այն օրը, երբ թրքական իշխանութիւններ խտտովանին պատմական ճշմարտութիւնը, ճանչնան մոռացութեան ու խեղաթիւրման մէջ պարտուած մեր ժողովուրդի տարածքային եւ նիւթական պահանջները: Հայկական պահանջատիրութիւնը իրենց քաղաքական շահարկումներուն խաղաքարտ ծառայեցնող պետութիւններ պէտք է գիտնան, որ Յեղասպանութեան ճանաչումը բաւարար չէ հայ ժողովուրդին: Ոմանք ի գուր կը փորձեն պատմական տարածքներու պահանջը փոխարինել լոկ ճանաչման պահանջով:

Մեր պահանջատիրութիւնը ճանաչումին զուգահեռ կ'ընդգրկէ տարածքային եւ նիւթաբարոյական հատուցում եւ, ամենակարեւորը, պժմու Հայաստանի հպարտութեան երաշխիքները: Դժբախտաբար, պատճառներ ունին մտահոգութիւն յայտնելու, թէ բոլորներու էտին ոմանք կրնան մինչեւ իսկ ծուլալի վերածել Յեղասպանութեան ճանաչումը՝ հրաժարելով տարածքային պահանջներէն:

Մեծ Եղեռնի ոգեկոչման 93-րդ տարին անհրաժեշտ է վերաթմբել մեր դիրքերը: Վերաստեութեան ենթարկել ճանաչման վերաբերել մեր շեշտադրումը: Ծանաչումը բաւարար՝ է ամենքիս հայ ժողովուրդին հոգեկոչմանը: Ո՛վ պիտի երաշխատէ որ Թուրքիա հրաժարած է փանթորանական իր նկրտումներէն: Ծանաչման իրողութեան զուգահեռ նոյնքան կենսական է մեր հայրենիքի անվտանգութիւնը: Այս իսկ պատճառաւ ճանաչման օրակարգին վրայ պիտի դնենք տարածքային ու սոցիալական հատուցման խնդիրները:

Մեծ Եղեռնի 93-ամեակը միաժամանակ առիթ է վերաստեութեան ենթարկելու մեր ազգային, հայրենական իրականութեան մէջ կոտորած դատարանները: Հայրենական գետնի վրայ կը գիտակցինք, թէ Հայաստան իբրեւ Կովկասի անցած պետութիւն դարձած է Արեւմտեայ երկարամտակէտ քաղաքական ծրագիրներուն սեւեռակէտ: Ժողովրդավարական հիմնական չափանիշներու կիրառման տեսանկիւնէն, չենք կրնար անտարբեր մնալ ընկերային արդարութեան, արտագաղթի, փտածութեան, դիւանակալութեան, իրաւապահական մարմիններու կամայականութիւններուն հանդէպ հայրենի ժողովուրդին բողոքներուն, փոփոխութեան պահանջներուն: Միւս կողմէ, ինչպիսիս ալ ըլլայ հայրենիքի ընկերային, քաղաքական իրաւիքները, դատապարտելի կը գտնենք տիրող խորթ երեւոյթները արտաքին ուժերու գորակցութեամբ վերանայելու ոմանց միտումները: Հայ ժողովուրդը, ինչպէս անտարբեր ազգեր, պիտի ունենայ կամ աւելի ճիշդ՝ պիտի ստեղծէ իր ազգային անվտանգութեան հայեցակէտը: Մեր նպատակը պիտի ըլլայ ստեղծել ժողովրդավարական այնպիսի համակարգ, որ ծառայէ իբրեւ հայ ժողովուրդի պատմա-քաղաքական, ազգային, մշակութային արժէքներու եւ իրաւունքներու պահպանութեան խորհրդանիշ: Սփիւռքի պարագային, կ'ընթերցենք սիրաբանական գրաւականը հաւաքական աշխատանքը: Ուստի անհրաժեշտ կը գտնենք սփիւռքահայութեան գործունէութիւնը հունարող հասարակութեան ներկայացուցչական միատրիք մը ստեղծումը, որուն հովանաւորութեան տակ մէկտեղուին սփիւռքահայ մեր բոլոր ներկայացուցչական կառույցները: Հասարակական ու միասնական աշխատանքի մէջ կը կայանայ մեր համագործակցային ծրագիրներու յաջողութիւնը: Նախանձելի այս մարտավարութիւնը աւայժմ հեռու է մեր բոլորէն:

Լիբանանահայութիւնը հանդիսատարապէս կը նախապատրաստուի ոգեկոչելու Մեծ Եղեռնի 93-ամեակը: Մեր պահանջն է, որ Հայ Դատի ու պահանջատիրութեան հետապնդման քայլերը լեւ աչտու ծառային Կեդրոնական Մարմնի մը հովանաւորութեան տակ, որ իր անմիջական դրական արտայայտութիւնը պիտի ունենայ այլ գաղութներու վրայ եւ:

Համահայկական պահանջատիրութեան Համագործակցային Ուխտի այս օրը, հայ ժողովուրդը կ'ուխտէ շարունակել պայքարը մինչեւ քանիչ լուրջութեան պատը:

Հայկական Յեղասպանութեան 93-ամեակի խոհական այս օրերուն մեր ժողովուրդը պիտի վճռէ ուժանցնել իր ներքին միասնակցութիւնը: Միասնակցութեան եւ փոխադարձ համընդհանրութեան խորհրդորհն գիտակցութեամբ կը խոնարհինք Մեծ Եղեռնի բիրտար ուսուցանելու յիշատակներու եւ կ'ուխտենք Հայաստան եւ Սփիւռք մնալ պատճէշի վրայ՝ միասնական եւ համադրուած քայլերով հետապնդելու պահանջատիրական երթը: Բաւ է ցաւ ու սիրտը: Պահանջատիրական երթը կը մնայ վա՛ր ու անկնու՛ն, գերիվեր բոլոր հատուածական շահերէն: Միասնական գոյերակը պայմանաւորուած է մեր յաղթարձակ գրաւակները: Այս կը վկայէ մեր պատմութիւնն ամբողջ, ա՛յս է վճիռը հայութեան, ա՛յս պիտի ըլլայ մեր ազգային հաստատման անասան:

Այսօր՝ խունկ ու աղօթք Մեծ Եղեռնի անմահ նահատակներուն: Այսօր՝ կամք ու կորով մեր նորահաս սերունդներուն: Այսօր՝ ուխտի օր դէպի ամբողջական Հայաստան:

ԱՀԱՐՈՆ ԾԽՏԸՄԵԱՆ

100-ամեակին Ընդառաջ

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Հայկական Ցեղասպանութեան 93-ամեայ նշումը մեզ դարձեալ կը սնէ հրապարակային խորհրդածութեան, սակայն առանց մնալու ընթացիկ մտորումներու ծիրէն ներս, որովհետեւ այդ հանգրուանները, որքան ալ կարեւոր կամ անխուսափելի ըլլան, աղոթահանդերձ, այս ուղղութեամբ նոր նուաճումներ արձանագրելու հրամայականները կը դառնան առաջնահերթային:

Ասկէ մեկնելով, երբ հաշուեյարդարի կ'ենթարկենք յատկապէս անցնող տարիներու կատարուած աշխատանքները, քաղաքական, պատմական թէ դիւանագիտական մարզերէն ներս, իրօք, գնահատելի որոշ երեւոյթներու դէմ յանդիման կը գտնենք մենք զմեզ:

Այս պարագային, խօսքը կը վերաբերի միջազգային ոլորտներու մէջ յայտնուած Հայկական Ցեղասպանութեան ընդունման ու ճանաչումի արձանագրութեանց, ինչ որ ենթադրել կու տայ այս առնչութեամբ յառաջդիմական հոլովոյթներու:

Սակայն, այս բոլորը չեն կրնար մեզ լրի գոհացնել, պարզապէս անոր համար, որ ընդունումի ու ճանաչումի իրողութիւններէ անդին, անհրաժեշտ է Հայկական Ցեղասպանութեան թրջածրարին տալ նոր որակ ու սղում:

Բնական է, հայկական պահանջատիրութեան հետապնդումը միայն բանի մը ուղղութիւններով չի կրնար ընթանալ, այլ բազմակողմանի ու բազմաբնուէր զուգահեռներով ու միշտ զանոնք "կենդանի" պահելու առաջարկներով:

Հողային պահանջատիրութիւնը, ինքնային անկորնչելիութիւնը, հատուցումային հետապնդելիութիւնը, այսօր, աւելի քան երբեք, իրենք զիրենք պարտադրող են, հանդի աշխարհին նաեւ բացատրելու, այլեւ համոզելու, թէ ստոնք եւս հայ ժողովուրդին *անժամանցելի* դատին մաս կազմող իրաւունքներ են, ոչ որ պէտք է յաւակնութիւնը ունենալ զանոնք շրջանցելու եւ ոչ որ կրնայ այս իրականութիւնները մոռանալ:

Նոյն շրջագիծէն ներս, Հայկական Ցեղասպանութեան միջազգայնացման ճամբուն վրայ, անտարակոյտ, պատմագրական ու պատմագիտական հրատարակութիւնները, հետազօտութիւնները, ուսումնասիրութիւններն ու մենագիրութիւնները կարեւոր ներդրումներ կը նկատուին, մանաւանդ անոնք որոնք օտար լեզուներով են ու կը զգենուն լուրջ, անաչառ եւ անկողմնակալ մօտեցումներ:

Հնա է որ կը պահանջուի Հայկական Ցեղասպանութեան տալու "թափանցում"-ի քաղաքականութիւն մը դէպի թրքական աշխարհը, հոն եւս հող ստեղծելու ու սնունդորտ պահելու՝ անոր անհրճելիութիւնը ապացուցելով, նոյնիսկ ի հեճուկա թրքական մերժելիութեան կամ անտարբերութեան: Ժիշդ է, որոշ առումներով այս կապակցութեամբ կատարուած են նման "միջամտութիւններ", ստոնք սակայն պէտք է աւելիով զարգանան եւ ուժանան, թորք հանրութեան, աւելի ճիշդ մտաւորականութեան ու պատմաբաններուն ցոյց տալու Հայկական Ցեղասպանութեան ամբողջական իրականութիւնը:

Թէ որքանով կարելի է այս բոլորը պսակել յաջողութեամբ, ժամանակը կ'որոշէ, բայց յստակ է, որ թէկուզ երբայ առ քայլի յաջողականութեամբ, ստոնք կրնան դառ-

նալ իսկական ցուցանիշներ:

Անշուշտ, երբ կը խօսինք Հայկական Ցեղասպանութեան մասին, զայն աշխարհին սեփականութիւնը դարձնելու մնալուն եւ ամուր հրամայականով, մեր խոր ակնկալութիւնը կ'ըլլայ այն, որ հայ ժողովուրդի բոլոր հատուածները պէտք է կեդրոնացնեն ու ներդաշնակեն իրենց աշխատանքները:

Արդարեւ, Հայաստանը, Արցախը եւ Սփիւռքը, այլ ընտրանք չունին, բացի համախմբուելու ու հայկական պահանջատիրութեան տալու իր անհանձնելի կենսականութիւնը, առանց որեւէ ընկրկումի, տատանումի կամ ծանծաղումի, մանաւանդ ՏԱՐԱԳԻՐ հայութեան ժառանգորդները պարտաւոր են հաւատարիմ մնալու նահատակներու պատգամին, թէ՛ չարքելու անոնց անմեղ յիշատակը, թէ՛ երդուելու կառչած մնալու մեր իրաւունքներու ամբողջական ձեռք բերման:

Այս առիթով, սակայն, չենք կրնար չանդրադատուալ լիբանանահայութեան վերապահումը դերին, որ իրաւա՛մբ եղար բարացուցական Հայկական Ցեղասպանութեան թրջածրարին բացումին ու զայն շրջանառութեան մէջ դնելու, շրջանային թէ միջազգային մակարդակներու վրայ:

Գժախտաբար սակայն, վերջին տարիներուն, բացի կարգ մը գնահատելի նախաձեռնութիւններէ, մեծոյի եւ աչքառու ոչինչ տեղի ունեցաւ, ո՛չ քաղաքական, ո՛չ մտաւորական, ո՛չ ալ գիտական մակարդակներու վրայ, նոյնիսկ լայն հրապարակային արարողութիւնները բացակայեցան:

Ինչ կը վերաբերի արաբական եւ ի մասնատրի լիբանանեան ճակատին, դարձեալ լիբանանահայութիւնը մնաց ստուերի մէջ, երբ չկրնար Հայկական Ցեղասպանութեան թրջածրարին "նորարարութիւնները" շեշտելու կարելիութեանց շուրջ նոր յառաջխաղացներ արձանագրել:

Ներլիբանանեան քաղաքական, տնտեսական կամ ապահովական տագնապները պատրաստելը ո՛չ մէկ արդարացումի կամ չքմեղանքի կրնան արժանանալ, այնքան ստոնք որ զանոնք յաղթահարելու ճիգերը կան, իսկ զանոնք յաղթահարելը կը մնայ նոյնիսկ պարտականութիւնը լիբանանահայութեան:

Ամբողջ հայ ժողովուրդը կը գտնուի Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակին ընդառաջ, իսկ սակա պարտաւորեցնող եւ յանձնարարող խորհուրդ մը կը պարունակէ իր մէջ, այս վայրկեանէն սկսեալ լծուելու անոր շերմեռանդ աշխատանքի, բոլոր մակարդակներու վրայ:

Լիբանանահայութիւնը, իր զանազան ու բազմազոն շերտատրոմներով, առանց ինքզինք անջատելու իր քաղաքացիական պարտաւորութիւններէն, այլապէս ալ ինքզինք չմիտնելու լիբանանեան քաղաքական անբարեկուս տիրման մէջ, անհրաժեշտօրէն պէտք է պատճէշի վրայ մնալ, Հայկական Ցեղասպանութեան տալով յստակ, անսայթաք ու հեզասահ հունարտում:

Առ այդ, 93-ամեայ այս ոգեկոչումին առիթով, հայ ժողովուրդը լիովին յանձնառու պէտք է մնայ մեր ազգային ուխտին, դատին ու պահանջատիրութեան, իսկ մեր բիրտար ուսուցանելներուն յիշատակը յաւերժ անսար:

ՊԱՐՈՅՐ ԱՂՊԱՇԵԱՆ

ԻՆՏԵՆՏԻՆ ԵՐՐՈՐԴ ԵՂՉԱՍԿԱԿԱՆ ՕՐԸ

Կու գայ ան, տարուէ տարի, իննսուն երեք տարիէ ի վեր, իր ազգու եւ սեւաւոր կերպարանքով, որպէս տարիքը պատմական եւ ազնուական ազգի մը ցեղասպանութեան, անհիտման ծրագրի դժոխային յղացման: Կու գայ ան իբր սպասուած, խաւարափայ եւ մահաբոյժ ուրուականի մը ազդեցութեամբ նորոգելու համար մեր հոգեկան անդուհանքն ու մղձախանքը եւ արհեստներու համար մեր կոտորածը վերհերքել: Որովհետեւ ան կը խորհրդանշէ պատմութեան մէջ անհալքեթաց զանգուածային տեղահանութիւնը, հողային բռնագրաւումը, սպանդը՝ շատ աւելի հրէշային քան ձեկնկիկ թանկի եւ Լեկնիքիմուրի սարժած արեւնի բաղնիքները, որոնք նկատուած են Երեւանի հայոց անհիտումը, սպանութիւնը հայ հոգիին:

Իննսուն երեք տարիներէ կու գայ ան, մանաւանդ իբր փառասուն մը, ուր ազգ մը ամբողջ իր հայրենիքի հպատակութեամբ սեղանին վրայ կը նսնենք իբր ողջակէզ, "մեհացորդ" Սփիւռքի մէջ կը բժշկէ իր վերքերը ու կը մասնակցի, փառով ու պատիւով, լուսաւորեալ ժողովուրդներու մեծ արշալիմ՝ ի խնդիր փաղաքակիրթ մարդկութեան շինութեան, երջանկութեան եւ խաղաղութեան, մինչ հայրենի հողին վրայ անող հարազատեան կը կամբքեն հայկական փառաւոր եւ բնամարտիկ անցեալը յաւերժութեան հետ, յանուն մարդկութեան նուաճումների կատարելով գիտութեան եւ գեղեցիկ դարձութեանց մէջ, եւ իւրակերպ դրսեւորելով անմահութեան նկրտող հայու հոգին: Վասնզի հոն է որ կը կատարուի, Ապրիլ 24-ին վերապրելու խորհուրդը, ինչպէս պիտի ըսէ մեծանուն բանաս-

տեղծը եղիշէ Չարեանց, լուսիններ կը նետուին դէպի երկինք եւ արեւներ կը բերուին դէպի երկիր:

Իննսուն երեք տարիներէ ի վեր կու գայ ան...:

Սակայն, պիտի ուզէինք, որ ան գար սպասուած կամ փառասուն աւելի եւ վեր, իբրեւ հայ ժողովուրդի եւ մանաւանդ հայ ազգի իրական պահանջատիրութեան իրաւական յաղթանակի օրը: Արդարեւ, Ապրիլ 24-ը՝ նախափնիքն է մարդկութեան եւ պարսի կապարի ծանրութեամբ ճեշել կարիք մը խնդր ունեցող սրտերու վրայ: Ան կը ճշէ փաղաքացիական եւ մարդկային իրաւունքներէ զրկումը հայոց, անոնց զանալով իրենց սեփական հողը ու ապրելու իրաւունքը: Թշնամի սերտած էր հայոց Արշակունցի Արշակ Բ. բագաւորի սրտագրաւորէն յուզիչ դրուագը, եւ անոր մարդկայնական խորքն ու տարողութիւնը, ահա թէ ինչո՛ւ յղացած էր հայու հոգին հայու հողէն տարանջատելու ցեղասպան ծրագիրը:

Արդ, բշնամի մեր հոգիին տիրանալու համար նաեւ տիրացաւ մեր հողին, պայքանական մեր զեպիսին, ուր բուր կը վայելն աւերակներու մէջ... ատիկա, սակայն, չ'արդարանար ե՛ւ ոչ մէկ օրէնքով: Միջազգային օրէնքներու համաձայն, հողերու, երկիրներու կարելի է տիրանալ կը կամբքեն հայկական փառաւոր եւ բնամարտիկ անցեալը յաւերժութեան հետ, յանուն մարդկութեան նուաճումների կատարելով գիտութեան եւ գեղեցիկ դարձութեանց մէջ, եւ իւրակերպ դրսեւորելով անմահութեան նկրտող հայու հոգին: Վասնզի հոն է որ կը կատարուի, Ապրիլ 24-ին վերապրելու խորհուրդը, ինչպէս պիտի ըսէ մեծանուն բանաս-

տանն":

Իննսուն երեք տարիներէ ի վեր կու գայ ան... Ապրիլ 24-ը, մեզի եւ մարդկութեան խղիճ յիշեցնելու հայկական խնդիրները, Հայոց Դատը, հայոց պահանջատիրութիւնը, որ կը ներկայացուի հողային, նիւթական, տնտեսական եւ յարակից պահանջներով, զանց առնելու համար հոգեւոր եւ բարոյական պահանջները: ՄԱԿ-ի՝ ազգերու միջազգային արդարութեան արիպագոսի հովանիները, ժողովուրդներու ինքնորոշման սկզբունքով եւ մարդկային իրաւունք գաղափարաբանութիւնով սուկի նման բուսած, անցեալ, զարգացած, գերիշխան եւ վեհապետ հուշակուսեան ժողովուրդներ, կիսակոտոր պետութիւններ:

Կը շարունակուի հայուն զլացուիլ արդարութիւնը:

Հա՛րք միայն փոցն ու պսակն ունի արդարութեան: Կու գայ ան, Ապրիլ 24-ը մեր ցամաք աչքերուն մէջ բարմացնելու արցունքի սառած կարիկներ: Թող գայ, սակայն, մեր ակնցներուն մէջ շողացնելով արդարութեան տօնի եւ յաղթանակի դրաւանքն ու բրարիւնը:

Պիտի գայ ան, անմահ բոցի վերածելու համար հայ հոգիին մոխիրներու տակ անբեղում մշտաթափ կայծերը: Մենք, սակայն, գիտակցիմք մեր փառաւոր եւ լուսաւոր անցեալին: Արժանի ըլլանք մեր նահատակներու խնկիկ յիշատակին:

Կենցաղավարենք հայ հոգիին արժանավայել կեանքով, եւ գործենք հաւատարմութիւնը եւ պղծուեցան արդարութեան եւ խղիճ բոլոր նկատումները: Եւ մեր օրերուն փանթեկներու խնկիկ յիշատակները կ'իսկապարենք բարբերու վերջը "մարդ կը սարբեն, խաղաղութիւն կ'ան-

ՕՀԱՆ ՊՈՏՐՈՒՄԵԱՆ